Լոռու մարզի Փամբակ համայնքի ղեկավար
պարոն Ս.Կոստանդյանին

Դիմող՝ Աշոտ Ռեմիկի Չատինյան
Ն/Ք՝007383912,տրված՝29.04.2016թ. 033-ի կողմից,
Հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, 9 փ,8 տնակ

Դիմում

Հարգելի՛ պարոն Կոստանդյան,

Ընտանիքս մինչև 1988թ-ի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած երկրաշարժը Լեռնապատ համայնքում ունեցել է բնակելի տուն, որը քանդվել է երկրաշարժի հետևանքով:

Հայցադիմում է ներկայացվել Վարչական դատարան: ՀՀ Վարչական դատարանը թիվ ՎԴ6/0108/05/20 վարչական գործով 15.02.2023թ-ին հրապարակված վճռով հայցադիմումը բավարարել է, որով Դատարանը վճռել է՝ *Պարտավորեցնել Լոռու մարզի Փամբակ համայնքի ղեկավարին Աշոտ Չատինյանին 01.12.2008 թվականի դիմումի կապակցությամբ օրենքի ուժով ընդունված բարենպաստ վարչական ակտը (օրենքով սահմանված փաստաթուղթը) այն մասին, Ա.Չատինյանի դիմումը բավարարվել է և նրա ընտանիքը վեց անձով վերցվել է հաշվառման Լեռնապատ համայնքի՝ աղետի հետևանքով անօթևան մնացած անձանց հերթացուցակում, տրամադրել:*

Լոռու մարզի Փամբակ համայնքի ղեկավարից հօգուտ Աշոտ Չատինյանի բռնագանձել 4000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի փոխհատուցման գումար: (Վճիռը հրապարակված է «Դատալեքս» տեղեկատվական հարթակում):

Նման պայմաններում ՀՀ կառավարության 10.06.1999թ. թիվ 432 որոշման համաձայն իմ բնակարանային գործում առկա նյութերը և հերթացուցակում հաշվառված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ուղարկվի ՀՀ քաղաքաշինության կոմիտե, այդ թվում նաև կատարել դատական ծախսերի հատուցման վճարումը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ, 31-րդ հոդվածով՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

- *Տրամադրել 01.12.2008 թվականի դիմումի կապակցությամբ օրենքի ուժով ընդունված բարենպաստ վարչական ակտը (օրենքով սահմանված փաստաթուղթը) այն մասին, որ իմ դիմումը բավարարվել է և իմ*

0693112
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԻՑ N 1363
«31» 05 2023թ

ընտանիքը վեց անձով վերցվել է հաշվառման Լեռնապատ համայնքի՝ աղետի հետևանքով անօթևան մնացած անձանց հերթացուցակում.

- *Իմ ընտանիքի բնակարանային գործը ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1337-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն ներկայացնել ՀՀ քաղաքաշինության կոմիտե:*

Կից ներկայացնում եմ անձնագրիս պատճենը.

Դիմող՝ Ա.Չատինյան

31.05 2023թ.